



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձեռփոխել կամ օգտագործել առկա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ ԼՈՒՄ. ԳՈՐ. ԿՈՍՏՈՎՈՒԹՅԱՆ - ԱՊ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՁ.

Ա.ՇԽ. Ա. Ա.ՍԵՒՔ. ԴՊՐՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ


ԲԱՐԵՎՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 12
Խմբ. Մ. Զառաֆյանի յել Ա. Արարատյանի

ՏՈՐՅԱ,
ՔԱՐԱԾՈՒԽ
ՅԵՎ. ՆԱՎՐ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.

ՅԵՎԵՎ Ֆ 6-1927




Հայոց առաջնահարաբեկ քահանաց
Աշուածավան Ա. Առաքելի գործադրությունները Եկ 27

№ 12 «ԲԱՆԱԿԹՑՈՒՆ ՑԵՎ, ԳԵԼԵԱՏԱՌԱՐ» № 12
կազ. Մ. Զառամյանի յեվ Ա. Աբրամյանի

082, 1:54

ՏՈՐՓ, ԲԱՐՁԵՐԻՒ ՅԵՎ ՆԱՎՐ

H 4330




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

8 b r b d m 6 - 1 9 2 7

Դրառնողվար № 340ը. հ. 615 Տիրաժ 6000
Պետհատի յերկրորդ տպարան Յերեվանում 942

1. ՓԱՅՏԻ ՏԱՄԱՐՔ ԹՈՐՈՒՄ

Վերցըք մի կատը փայտ, դրեք յերկաթե
թիթեղի վրա և տակից ուժեղ տաքացըք բ, կը
տեսնեք, վոր փայտը սկացավ և դառավ ածուխ:
Վառված լուցկին մոռեցըք նրան, նա իսկույն
կրոցավառվի և տակ կը մնա չնչին քանակու-
թյամբ մոխիք: Սա մի շատ հասարակ փորձ ե,



Նկ. 1. Փայտի ցամաք թորում:

բայց մեզ համար շատ հարցեք և պարզում: Հենց
առաջին հարցն այս ե, ինչ յեղան փայտի մրւու

մասերը։ Նրանք դառան ածխաթթվական գաղ,
ջրալին դոլորշիներ և ցնդեցին ողի մեջ։ Յերբ
փ ոյտը փառւմ է բացոթյա, բոլորովին նույն
յերեռութին է տեղի ունենում, միայն թե գոլոր-
շի ացումն ու գաղացումը կատարվում է շատ
աննկատելի, դանդաղ։

Բայց մեզ համար շատ հետաքրքիր է, թե
ի՞նչ կը կատարվի փայտի հետ, յեթե նրա ալրումը
կամ փառւմը կատարվի վոչ-բացոթյա կամ ավելի
ճիշտը ողի բացակայությամբ։

Հետեւուլ փորձը մեզ կոֆնի այդ հարցի
պատասխանը դանելու վերցնենք մի ապակե փոր-
ձանակ, նրա մեջ լցնենք փայտի թեփ, տաշեղ
կամ լուցկու կտորներ, միայն կոթերն, ի հարկե,
և վոչ դիւխները, վորպեսզի չը բռնկվեն։ Փոր-
ձանակի բերանը փակենք խցանով, իսկ խցանի
միջով անցկացնենք մի ծոված խողովակ։ Փոր-
ձանակն ամրացնենք մի պատվանդանի վրա, մի
փոքր թեքենք այնպես՝ վոր մեր խողովակը
կախվի մի այլ ապակե անոթի մեջ, վորի բերանը
դարձյալ խցանով փակած է։ Յերկրորդ անոթի
վրա ամրացնում ենք մեկ ուրիշ ապակե խողովակ,
ծալը մի քիչ սրած, վորպեսզի անցը փոքր
լինի։

Փորձնուկի տակը տաքացնենք սպիրտալրո-
ցով։ Ի՞նչ ենքնկատում։ Փայտի թեփը կամ տաշեղը

բանի գնում սկանում եւ և ածխանում, իսկ յերկրորդ անոթի մեջ մենք տեսնում ենք հավաքված սպիտակ, կաթնաղույն գաղ։ Յերբ լուցկին մոտեցնում են յերկրորդ անոթի վրա ամրացրած ապակե խողովակի ծալրին, այնտեղից դուրս յեկող գաղը բոցավով ովում եւ և մոմի պես ալրվում պայծառ լուսով Բանից դուրս եւ գալիս, վոր դա լուսավառության զազն եւ։ Ուրեմն այդ փորձից կարող ենք յեղբակացնել, վոր յերբ փառեն այրում ենք արտաքին ողից եռու կամ ավելի ճիշտ նրա բացակայությամբ, ստանում ենք լուսավառության զազ։

Այս գեռ բոլորը չեւ։ Ուշաղբությամբ նայեցք և յերկրորդ անոթի հատակին կը տեսնեք նստած մի գորշաղույն հեղուկ, վոր կաթում եւ փորձանոթի ծուռ խողովակից։ Հոտ քաշեցնք, կուպրի կամ ձլութի հոտ կ'զզաք, Յեվ իսկապես, ուսումնասիրությունը ցույց եւ տվել, վոր ալդ հեղուկն իր մեջ պարունակում եւ փալտի սպիրա, քացախական թթու, կուպը և այն։

Այս մեր կատարած փորձը կոչվուժ եւ փայտի ցամաք թորում։ Ուրեմն ցամաք թորման միջոցով կարելի յեւ ստանալ ածուխ, կուպունման հեղուկ և լուսավառության զազ։ Վերջինս կազմված եւ ճահճային գաղից և ջրածնից։

Հիշված նլութերը մեծ գործարաններում ստանում են քարածխի ցամաք թորելուց։

2. ՓԱՅՏԱՄՈՒԽ

Փայտի ցամաք թորման փորձն արդեն մեղ
սովորեցրեց, թե ինչ կերպ կարելի յե ածուխ
ստանալ փայտից: Մեծ քանակությամբ փայտա-
ծուխ ստանալու համար նույն ցամաք թորման
գործողությունն են կատարում, միայն ավելի
խոշոր չափերով: Ածուխ պատրաստելու համար
նախ և առաջ գետնի մեջ փորում են մեծ մեծ
փոսեր: Ասլա, մեծ գերանները ճղոտում են և
վորոշ կարգով դարսում այդ փոսերի մեջ: Վրայից
ծածկում են հողով կամ կավով, մի յերկու փոր-
ըիկ անցք են թողնում վերեից և հետո տակից
վառում: Յերբ փայտերի կույտն սկսեց ալրվել,
վերեի անցքը փակում են և թողնում, վոր հե-
տագա ալրման գործողությունը կատարվի առանց
ոլի մասնակցության: Հասկանալի յե, վոր ալսածեղ
ել կը կատարվի այն յերեսույթը, ինչ վոր մենք
տեսանք մեր փորձանակի մեջ: Փայտը կածխանա,
նրա միջի ջրալին գոլորշիները և այլ մասերը կը
հեռանան և մենք կ'ստանանք փայտածուխ:
Այսինքն այն վառելիքը, վոր մեզ տալիս և շատ
չերժություն և քիչ ծուխ:

Փայտի փառելու ժամանակ ել նույն յերեսույթն
և տեղի ունենում, բայց վորովհետեւ նա ողի հետ

հաղորդակցություն սնի և այլումը լրիվ և
կատարվում, թեև դանդաղ, մենք այլոս ածուխ
չենք ունենում:

Բայց բարորովին այլ է, յերբ փայտի փտումը
կատարվում է ջրի մեջ:

Տեսնենք, ինչ է սեացվում այդ ձեի փտումից:

Յ. ԱՇՈՒԽԻՄԻ ԳՈՅԱՅՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ելք վերադառնանք մեր փայտի կտորին: Այս
անդամ նա թող ընկած լինի ջրի մեջ:

Այսուեղ ել նրա հետ կատարվում է այն, ինչ
վոր կատարվեց ցամաք թորման ժամանակ, միայն
շատ ավելի դանդաղ: Ջրի մեջ ընկած փայտը
ժամանակի ընթացքում նույնպես սեւանում է և
հետզհետեւ ածխանում: Նրանից ել անջատվում
են ճահճային և այլ գազեր: Տեսած կը լինեմք
իհարկե, թե ինչպես ջրի մեջ ընկած գերանը
սեացած է լինում: Այս ամենը գալիս են մեզ
տսելու, վոր ջրի մեջ ել այլում է կատարվում:
Այլ կերպ ինչպես բացատրենք ճահիճներից բարձ-
րացող ճանային գազի գոյացում: Այս գազը
ածխածնի և ջրածնի միացումն է, վոր առհասա-
րակ այն ճահիճներումն է լինում, վորտեղ փայ-
տեղին կամ բուսական մնացորդներ շատ կան:

Յես պիտք է ձեզ տսեմ, վոր փայտը վոր-

քան յերկար մնա ջրի մեջ, այնքան նրա միջից
կը պակասեն ջրածինն ու թթվածինը, վոր նրա
բաղադրիչ մասերն են: Իսկ ածուլսի մեջ նրանք
չը կան: Յերբ դիտավորլալ կերպով փայտն ած-
խացնում ենք փայտածուխ ստանալու համար, գա-
կոչվում ե փայտի արհեստական ածխացում, իսկ
յերբ փայտն ածխանում ե ջրի մեջ ողի բացա-
կալությամբ կամ գետնի տակ՝ կոչվում ե ընական
ածխացում: Բնական ածխացումը կատարվում է
հակայտական չափերով, յերբ ամբողջ անտառներ
մնում են ջրի կամ գետնի տակ:

Ցամաք թորումը մենք կատարեցինք փայտի
թեփի վրա, բայց այդ յերեսությը տեղի կունենա-
նաւ այն զեպքում, յերբ փորձում ենք բռյափի
մլուս մասերի հետ, որինակ, տերեների, սերմերի,
հարդի, ծղոտի և այլն:

Ի՞նչպես ե լինում, վոր ծառերն ու ընդ-
հանրապես բոլոր բռյաերը թաղվում են ջրի
տակ:

4. ՏՈՐՔ ՅԵՎ ԳՈՐԾ ԱՌՈՒԽ

Դուք, ի հարկե, ամենքդ ել տեսել եք ճահիճ:
Բայց այնպիսի ճահիճ, վոր ծածկված լինի մա-
մուռով, ճահճապին խոտերով ու թփուտներով,
յերկի, քչերդ եք տեսել: Բայց մեզ ել հենց այդ-
պիսի ճահիճներ են պետք: Այդպինի ճահիճները

բույսերի համար գերեզմանոց են: Ճահճի յերեսը
ծածկած մամուռները, բույսերի և թփուտների
արժաներն ու ճյուղերը պառկրւմ են այնուեղ
և հետզնեռե իջնում նրա հատակը: Յեզ տարեց
տարի իրար վրա դարսվելով կազմում են շեր-
տեր: Այդ շերտերը կամաց-կամաց ածխանալով
դառնում են այն վառելիքը, որ կոչվում ե
տորֆ:

Տորֆը գորշ-կարմրագույն, ջրից թեթև և
խցանի նման մի բուսական շերտ ե: Ամբողջովին
կազմված երարակ թելերից, խոկ նրանց արանքում
պարզ նկատվում են բուսերի դանազան մասեր: Տորֆը շատ հեշտո թյամբ այրվում ի, բայց այր-
վելիս անգուր հոտ ե արձակում և շատ սոխիր ե
թողնում: Այդ կողմից կարող ե մեր աթարի հետ
մրցել:

Տորֆը ստացվում ե, գլխավորապես, տրթա-
մամուռ կոչված բույսերից Յերբ մամուռի շեր-
տերը հետզնեռե հաստանում են, տակի շերտեն
իջնում են ջրի տակը, մեռնում են և կիով չափ
փառում: Տորֆամամուռի հին ցողուններն ու տերե-
ները հյուսվելով իրար հետ թաղիքի նման շերտ-
շերտ նստում են իրար վրա և հեշտությամբ
պոկվում: Մի առ ժամանակ ջրի յերեսին
լողում են, հետո թացանալով սուզվում են ջրի
տակ և այսպես տարեց տարի կուտակվում: Ժա-

մանակի ընթացքում, յերբ ճահիճը չորանում և
այդ տեղը գառնում և տորֆավալր։ Այնպիսի
տեղեր կան, վոր տորֆի հաստությունը հասնում
է 12 մետրի։

Տորֆավալրերի զանազան խորություններում
հաճախ գտնվում են մալրիի, կաղնու, թթենու
և այլ ծառերի կոճղեր, կենդանիների, գլխավորա
պես, կաթնասունների մնացորդներ, վորոնք մի
ժամանակ արածելիս են յեղել ալգուել։

Ներկայումս արտասահմանում և Թուսաս-
տանի վորոշ մասերում մշակվում են տորֆա-
վալրերը և տորֆալին ճահիճները, վորովհետեւ
տորֆը բավականին լավ վառելանլութ և։ Այդ
նպատակով ճահիճները չորացնում են առուներ
փորելով, հեռացնում են վերին շերտի բուսական
խոնավ մասերը, բահերով կանոնավոր կարտ-
տում են տորֆը և զարսում իրար վրա։ Ցերեեմն
մանրացնում են, ջրի հետ խառնում և առանձին
մեքենայի միջոցով այդ զանգվածը նորից ճնշում
և սուանում տորֆի ամուր աղյուսներ կամ
րըիկետներ։

Նույն տորֆի շերտերը, յեթե իրար վրա
դարսվելով ճնշում են տակի շերտերը, ստացվում
ե մի ավելի խիտ և քարացած զանգված, վոր
վոչվում ե գորշածուխ, վոր համեմատաբար
ավելի լավ վառելիք և, քան տորֆը։

Կոն աեղեք, վոր տորֆը զործ են ածում,
վորպիս պարաբռացուցիչ միջոց։ Բայց նրա ար-
ժեքն անհամեմատ ցած ե գոմաղբից։

5. ԳԱՐԱՇԽԻ ԳՈՅԱՆԱԼԵ


Բնության մեջ, բացի տորֆից և գորշ-ա-
ծուխից կա մի այլ վառելիք, վոր կոչվում է
քարածուխ։ Ի՞նչպիս և զոյացել քարածուխ։ Ա-
մեփից առաջ չը մոռանանք, առել, վոր նա կարող
է հենց տորֆից ել զոյանալ։ Արդեն տորֆի գո-
յանալու մասին ունեցած տեղեկությունն ել արդ
և առում։ Ժամանակի ընթացքում տորֆի շեր-
տերը պնդանալով կաղմում են գորշ-ածուխ, իսկ
զերջինս ել ձեռափոխվում ե և դասնում քարա-
ծուխ։ Բայց քարածուխը զոյացել է շատ հին
ժամանակներում, յերբ ցամաքն ու ծովը յերբեմն
տեղափոխություն են կատարել։ Կարող եք յե-
րեակալել, վոր մի հսկայական անտառ, վոր ամ-
բողջ տարածություններ եք բռնում, հանկարծ
իջնի ծովի առկը, իսկ ծովի փոխարեն բարձրա-
նան լեռներ ու զանազան բարձրություններ,
վորոնք իրենց հերթին ծածկվեն անտառներով։
Այսպիսի յերեսությ յերկրագնդի կը անքում շատ
անզամ է կատարվել։ Այժմս ել Անգլիայի,
իրանգիալի և Ֆրանսիայի ափերում հաճախ կը

պատահեք ստորջրյա անտառների: Նշանակում ե
այդ լերկիրների ափերը ցածրանում են: Այդ ան-
տառները ծովի մեջ սկսում են ածխանալ, մենք
արդեն գիտենք, թե ինչնու: Մառերը մեկ մեկու
զրա թափփելով միմյանց ծածկում են: Ծովի ջրի
մեջ գետերի բերած տիղթն ու ավազը գալիս
խառնվում են նրանց, և վերջի վերջո իրենց տակ
թաղում: Նրանց վրա ավելանում են կրային
խեցիներից կազմած շերտերը: Մի կողմից ծովի
ջրի հսկա ծանրությունը և մյուս կողմից այդ
տականքների ծանրությունն այնպիսի հսկայական
ճնշում են առաջացնում, վորի տակ ածխացած
անտառը խտանում, քարանում և և դառնում
քարածուի:

Շատ-շատ տարիներ հետո ծովը նորից ցամաք
և դառնում և ցամաքը ծով: Նորից գոյանում
են անտառներ և նորանոր բուսականություն:
Անցնում են հարյուր հազարավոր տարիներ և
դարձալ գալիս և ծովի տիրապետությունը և այս-
պես շարունակ: Արդեն մեկ անգամ գոյացած
քարածխի շերտի վրա ավելանում և ուրիշ. այդ
լերկու շերտերի արանքում գտնվում են ավազի,
կրաքարի կամ այլ լեռնային տեսակի շերտեր,
վորոնք կազմել են ավաղաքար և թերթաքարեր:

6. ՔԱՐԱՄԻՆԻ ՀԱՆԳԵՐԸ ՅԵՎ. ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱ- ԿՈՒԹՅՈՒՆԸ

Քարամինի սե գույն ունի և բավականին
ծանր հանք և Արտաքին տեսքից բարբառին չի



Նկ. 2 Քարամինի հանք

կարելի հավատալ, վոր նա բուսական ծագում-ունի: Հաճախ լինում է թերթավոր, և տարբեր փայլ ե ունենում, մետաղափայլ կամ խավար թարածութի մի տեսակը կոչվում է անտրացիա, վորը մուգ-մոխրագույն է, մետաղյա փայլով և, համեմատարար, մյուս տեսակներից ամուր է:

Թարածուխը սովորաբար զեանի տակ շատ խորն է գտնվում: Նրա շերտերը կանոնավոր են, բայց շատ հստա չեն ցերկու մետրից վոչ ավել: Մուսատանում քարածուխը հաճախ պատահում է թերթաքարերի և ավաղաքարերի արանքում:

Թարածուխ ստանալու համար նախ փորում են շատ խոր հորեր, վորոնք կոչվում են շախոտեր: Ածուխը փորում են կամ ձեռքով մուրճերի և քլունկների միջոցով կամ առանձին բրիչով, ձնշած ողի և ելեքարականության միջոցով Մուրճերի և բրիչների հարվածով ածութի խոշոր կտորները փշրում են ավելի տանելի կտորների և հետո դարսում սալլակների վրա և հորիզոնական ուղղությամբ տանում մինչեւ գլխավոր շախար, վորտեղից առանձին վերելք մեքենայով բարձրաց-նում զետնի յերեսը:

Ածխահանքերում միշտ հավաքվում են սու-րյերկրյա ջրեր և, վոր ավելի փասն ե, ամբողջ ժա-մանակ հավաքվում է հանքավին գաղ, վորը երա-պես նույն է, ինչ վոր ճահճային գաղը, վորի

հետ մենք արգեն ծանոթ ենք։ Զարմանալու
վոչինչ չը կա, իբթե նա հավաքվում է ածխա-
հանքերում, չե՛ վոր քարածուխը, ինչպես տեսանք,
դոյցել է ջրի և զետնի տակ թաղված փայտի
քողքալումից, իսկ այդ դործողության ժամա-
նակ, ինչպես արգեն տեսանք, դոլանում և նաև
ճահճալին զար։

Ամենավատն այն է, վոր այդ ճահճալին գազը
խառնվելով ողի հետ կազմում է բոնկվող խառ-
նուրդ։ Ճշարիտ է, ածխահանքերում շինուած են
ամեղ նորմանաբներ, վորպեսզի շախտերի ողը
մաքրեն և թարու ող ներմուծեն, բայց անկարելի
յե լինուած ճահճային գազից բոլորսպին ազատվել։
Յեվ անա, յերեմն արդ բոնկվող գազը պայթուա-
է և մեծ ողետ առաջացնում։ Յեղել են գեպեր,
յերր շախտերում և ստորերկրյա անցքերում
հանքափորների հարյուրափոր դիակներ են մնացել.
Վորպեսզի այդ պայթումի վասնդից ազատ մնան,
ածխահատները դործ են ածում մի առանձին
բապտեր, վոր կոչվում է Դեկիի լապտեր, նրա
հարողի անունով։ Վերջերս ածխահանքեր ելեք-
տրականությամբ են լուրավորում։

Վատելանյութերի մեջ շատ կարևոր տեղ ե
բոնում քարածուխը։ Մեր կյանքն այժմ ամբող-
ջապես կախված է մեքենաների աշխատանքից։
Գործարաններում են պատրաստում այն ամենը,

ինչ վոր անհրաժեշտ ե մարդուն, թե քաղաքում.
 և թե զբուղում: Շոգեմեքենաներն են շարժում
 յերկաթուղու գնացքներն ու նավերը: Իսկ այդ
 շրջեմեքենաներն աշխատում են քարածխի շնոր-
 հիք: Յերկրագնդի ամբողջ անտառներն ել վոր
 դործածելինք իբր վառելանյութ, դարձլալ չեր
 կտրող բավականացնել այդ հսկա պահանջին: Այդ
 ե պատճառը, վոր քարածուխը վաղուց ի վեր
 դործածվում ե, վորպես վառելանյութ: Դժվար ե
 յերեակալել, թե ինչ զբություն կատեղծվեր,
 յեթե հանկարծ դադարեցնելին քարածուխի ար-
 դիունաբերությունը: Ազապես որինակ. յերբ Անդ-
 լիայում ածխահատները դործադուլ հայտարա-
 բեցին, քարածխի արտադրության հետ դադարեցին
 նուև բոլոր դործարսնների աշխատանքները և
 նավերը:


Քարածխի պաշարը հսկայական ե հողի տակ
 և նա այնքան ել շուտ չի վերջանա: Քարածուխի
 մեծ հանքեր կան Անդլիայում: Խոր. Միության մեջ
 հարուստ հանքեր կան Դոնի շրջանում, Վրաս-
 տանում Տկվարչելի կոչված տեղում:

7. ՆԱՎԹԱՎԱՅՐԵՐ ՅԵՎ ՆԱՎԹԱՀՈՐԵՐ


Մենք ունենք մի ուրիշ կարևոր վառելիք,
 դա նավթն եւ

Նավթն ամեն տեղ չի գտնվում. նրա գլխա-
փոր հայրենիքը կովկասն ե - Բագր. և Գրոգնի քա-
ղաքների մոտ և Ամերիկայի. Պենսիլվանիա նա-
հանգը և այլ լեռներներ. Յերբեմն. պատահում
ե, վոր նավթը գետնի տակից դուրս ե ծորում
կանաչգորշագույն հեղուկի ձեռվ և փոքրիկ լճակ-
ներ կազմում, վորտեղից և հավաքվում են, բաց
ավելի հաճախ նա գետնի շատ խորքերումն ե
լինում, ինքնիրան դուրս դալ չի կարող. պետք
ե գետինը ծակել և նրա համար դուրս դալու
ճանապարհ բաց անել. Ահա, այդ պատճառով
վորում են, ավելի շուտ ծակամ խոր անցքեր,
լեռեմն կես կիլոմետր խորությամբ: Գետինը
ծակում են տառնձին զայլիկոնով (բուրդու) և
յերբ հասնում են մինչև նավթի շերտին, լեռեմն
նրա մեջ հավաքված գաղերի և ջրային գոլորշի-
ների ճնշման ազդեցությունից նավթը շատրվանի
նման դուրս ե թափվում, նույնիսկ սասնյակ
մետր բարձրությամբ:

Այդպիսի շատրվանները լեռեմն գործում են
ամբողջ որերով և ամիսներով և որական հա-
րյուրավոր տոնն նավթ դուրս թափում: Ահա,
վորպիսի հակադական ուժ և վորպիսի հսկայա-
կան հարատություն կա թագնված գետնի տակ:
Յեղել են գետքեր, վոր այդ շատրվաններն ոգու-
տի փոխարին մեծ պարաներ են տվել: Այդպիսի



գեղքերում վոչ մի հնարավորություն չը կա-
շաարվանի բերանը փակելու պատահել են դեպ-



Նկ. 3 Նավթի շատրավան

քեր, յերբ չուզունե հսկայական ծածկոցներն
այնպես ե շպրտել, վոր մանր փշտանքների յի
վերածվելու Բայց միասը շատ ավելի մեծ ե, յերբ
նավթը բռնկվում ե. Հաճախ գործածվելիք յեր-
կաթե գործիքներից թուած կայծի ոլատառով
ստեղծվում ե մի ահռելի հրդեհ, վոր նույն-

պես շաբաթմներ ու տմիաներ և տեռում։ Ազդ ժամանակ նրա առաջն առնել բոլորովին անհնարին ե, մնում է միայն հարեան գործարաններն ազատել հրդեհից, մեկուացնելով նրանց։

Հորը փորելուց առաջ՝ այդ տեղում շինում են տախտակից բարձր վիշկանել։ Բազվի մոտ նավթարդյունաբերական գործարանների վայրերն ալզպիսի վիշկաների քանակն այնքան շատ է, վոր հեռվից անտառի տպավորութիւնն է անում։ Անվերջ շարունակվում է վիշկաների թիվն ավելանալ, վորովհետեւ միշտ նորանոր հորեր են փորվում։

Բանն այն է, վոր նույն արդ նավթահօրերում, մե քանի տեղեր գետինը ճեղքված է և այստեղից գուրս է զալիս ճահճալին գագ։ Բավական է վառած լուցկին մոտեցնես և նա խկույն կը բռնկի։ Այս հանգանանքը նույնպես տղետ մարդկանց հոգմար նախտապաշտրմունքի տարեկան լի լեզել։ Այստեղ մինչեւ որս ել կան կրակապաշտական մատուռներ, վօքտեղ մի ժամանակ հովաքվել և աղոթել են կրակ-աստծուն, վորովհետեւ տգետ ելին և չելին իմանում արդ կրակի տռաջանալու պատճառը։ Այժմ ամեն մի քիչ թե շատ ւայտ մարդ զիտե, վոր այդ կրակն առաջ է զալիս ճահճալին գագից, վոր բանկվելու հատկությունն ունի։

Ներկայումս այդպիսի բնական բռնկվող գաղերը հավաքում են և առանձին խողովակներով տանում զանազան հիմնարկներ և ոգտագործում կամ լուսավորության համար կամ վառարանների:

8. Ի՞ՆՉՊԵՍ ԱՐԱՀԱՏԱՎ ՆԱՎԹԸ

Այնքս ել հեռաքրքրվում ենք, թե վորտեղից ստացվեց նավթը գետնի տակ: Այդ հարցին մինչև որս ճիշտ պատասխան վոչ վոք չի տվել, բայց շատ գիտնականներ աշխատել են փորձով էննել նախ նավթի կազմությունը թե նա ինչ տարրերից ե շինված, և ապա արհեստական կերպով նավթ ստանալ, վորպեսզի դրանով ճշտեն նավթի գոյության պատճառը: Ամենից առաջ իմացան, վոր նավթը ածխաջրածնային միացումների մի բաղմատեսակ խառնուրդ ե: Մեզ համար այսքանն ել բավական ե, վոր իմանք թե նավթի մեջ մտնում են ածխածին և ջրածին գաղը: Պրոֆ. Ենգլերը վերցրեց կենդանինեսի ճարպը, փակեց մի ամանի մեջ և ուժեղ ջերմության միջոցով թորեց: Դուք արդեն գիտեք թորեն ինչ ե: Ճարպի թորածը յենթարկեց սաստիկ ճնշման և ստացավ նավթի բոլոր հատկություններն ունեցող մի հեղուկ: Այստե-

զից կարելի՞ յե, չե, նավթի ծագման մասին մի
ճշմարտանման յենթադրություն անել:

Ահա Ենդիերի փորձից շատերը յեղբակաց-
րին, վոր նավթն առաջացել ե ծովային կենդա-
նիների դիակներից: Շատ հին ժամանակներում
ծովերում ապրելիս են յեղել հսկա մեծության
սոլուններ, վորոնց կմախքները գտնված են և
այժմ պահպում են մեծ բաղաքների թնգարան-
ներում: Այդ կենդանիները զանազան պատճառ-
ներով վօչնչացել են: Յեղել են նաև կմախքից
զուրկ ձկներ, վորոնք նույնպես անհետացել են:
Բացի այս բոլորից՝ ծովերում ապրում են բազ-
մաթիվ մանր, կակդամորթ կենդանիներ: Ծովերի
վորոշ տեղերն այս բոլոր կենդանիների գերեզ-
մանն ե յեղել: Սյս կենդանիների վոչնչացման
գիսավոր սպատճառը ծովի ջրի աղիությունն եւ
կասպից ծովի մեջ կա մի ծանծաղ ծովածոց—
Կարարուգազ: Ծովի ջուրը մակընթացության ժա-
մանակ լցվում է այնտեղ և այլ հս հոսել չի
կարողանում, մնում է այնտեղ և դոլորշիանում: Այդ ծոցում ընկած ձկները մեռնում են ջրի
ստատիկ աղիությունից: Հակառակն ել ե պա-
տահում: Գոյանում ե մի նեղ պարանոց և քաղց-
րահամ ջուրը թափվում է աղի ջրի մեջ, ջրկ-
ներից շատերը գարձալ մեռնում են չը կարո-
ղանալով այդ նոր պայմաններին հարմարվել:

գետնի տակից դուրս ւեկող թունավոր զազերն
ել պատճառ են դառնում ծովալին կենդանինեւ-
րի հանկարծակի մահվան։ Նրանց դիակները հո-
սանքի հետ տեղափոխում են զանազան վայ-
րեր։ Գետերի բերած տիղմն ու ավազը լեկել
ծածկել են նշանց դիակները. նրանց վրա ժո-
մանակի բնթացքում կազմվել են կավային և
կրային շերտներ։ Արդեն իմացոնք, վոր ծովն ու
ցտաքը լերբեք հանգիստ չեն մնացել. միշտ ի-
րենց զիրքն ու տեղերը փոխել են։ Զուրը վերեից
ճնշել ե, յերկրագնդի կենտրոնը տակից տաքաց-
րել և արդարիսով բնական թորումն ե կատար-
վել կենդանական ճարպերի հետ, ինչ վոր Ենդ-
լերն արեց արհեստական կերպով։ Ժոմանակի
բնթացքում գազերը հավաքվելով այդ թորված
ճարպը կամ նավթը հրել են դուրս։

Այն հանգամանքը, վոր նավթաքեր շրջան-
ները մեզ մոտ զանվում են գլխավորապես կառ-
պից ծովի շուրջը, վոր տուած շատ մեծ ծով և
յեղել, Սև ծովի և Ստորոցաւ ովկիանոսի հետ
միացած, իսկ այժմ նրանցից կարգած ե և տվելի
ցամաքած՝ գալիք և հավանական դարձնելու
ենդերի յենթադրությունը վոր նավթը ծովի
կյանքի արդյունքն ե։

Մի ուրշ փորձ ել կատարեց ուսւա հայտնի
դիտնական Մհնդելեյեվը։ Նա վերցրեց հալած

սպիտակ չուզունը, աղաթթվով վերամշակեց և
ստացավ մի գորշագույն հեղուկ, վոր նավթի
հատկություններ ունի: Այս ձեռվ Ֆրանսիայում
մեծ քանակությամբ նավթ ստացան, բայց այդ
միջոցը թանգ եր հստում: Այժմ տեսնենք ինչ
լենթադրություն կարելի յե անել Մենդելեևի
փորձից նույնի ծագման մասին:

Մենդելեև մատնացույց և անում նավ-
թուրեր հողերի դիրքի վրա: Նրանք թե մեզ մոտ,
թե Ամերիկայում, գտնվում են լիռնաշղթաների
ստորոտներում, ամեն տեղ վիտրուն ավագաքա-
րերի խավերի մեջ: Վերեկից և ներքեկից կավի
կամ կրի շերտերով ծածկված, վորտեղ ջուրը չի
կարողանում թափանցել: Նավթի մեջ միշտ լուծ-
ված են լինում այրվող գաղեր, վորոնք ուժեղ
կերպով ճնշելով նավթի վրա ստիպում են վերե-
բարձրանալ և դուրս ժայթքել, մանավանդ ցե-
խի հրաբուղիների միջոցով, վոր շարունակ տես-
նում ենք նավթաբեր շրջաններում: Այդ հրա-
բուղիներից նավթի և գաղերի հետ միասին դուրս
են ժայթքում աղի ջրեր և հողի զանգվածներ:
Միևնույն ժամանակ յենթադրում են, վոր յերկ-
րադնդի խորքերում գտնվում են ծանր մե-
տաղներ, վորոնց թվում և բնածխական-յերկա-
թի զանդվածներ հալված վիճակում: Մետաղնե-
րի բնածխական միացումներ կարելի յե ստա-

նալ և արհեստական կերպով։ Այդպես որինակ
Հայելու չուզունը։ Աց է տելին գազը, վոր գոր-
ծածում են լուսավորության համար, ստացվում
ե բնածխական կրածնի վրա ջրի ներգործու-
թյամբ (կալցի-կարբիդ)։ Լեռնակազմության
շրջանում նրանց ստորատների շերտերը ճաքել
են և ճեղքվածքներ տվել։ Նրանց մեջ մտել ե
ծովի ջուրը և գնացել, հասել ե մինչև հեղուկ
բնածխական լեռկաթին։ Այդուղ կատարվել ե
այն, ինչ վոր փորձը ցուց տվեց։ հսկա ճնշման
և ջեռացման ազդեցության տակ ծովի ջուրը
փորպես աղաթթու ներգործում ե յել կաթի վա-
և բաժանվում ջրածնի և թթվածնի։ Թթվածինը
միանում ե լեռկաթի հետ և դուրս վանում ած-
խածնին, իսկ ածխածինն արագությունը միա-
նում ե ջրածնի հետ և ստացվում ածխաջրածին՝
նավթ։ Գազերը ճեղքվածքներով դուրս են
գալիս վերև ու ցրտանալով հեղուկանում ավա-
զալին սառը շերտերում և հաճախ դուրս հոսում։
Այս պրոցեսոն ամեն տեղ և ամեն անգամ կա-
տարվել ե լեռնագոյացության ժամանակ։

Նավթի կուտակումը չի կատարվում ամեն
տեղ։ Շատ տեղեր նավթի փոխարեն զետնի վրա
ստացվում են շերտավոր թերթեր, ասֆալտ, տեղ-
տեղ ել զազեր են դուրս գալիս, ջրի մեջ լուծ-
վում կամ ցնդում ողի մեջ։ Այս յենթագրու-

թէամբ նավթը շարունակ գոյանում և նորից և
մի տեղ նրա պաշարը սպառվելուց հետո կարող
և մեկ ուրիշ տեղ հավաքվել: Մինչդեռ Ենթերի
յինթաղբութիւնը նավթը պետք եւ սպառվի, վա-
րովինետե նրա աղբյուրն այլ եւ չկա:

Ահա, այն զիտական յինթաղբությունները,
մոր արել են զիտնականները նավթի ծագման
մասին:

9. Ի՞ՆՉ Ե ՍՏԱՑՎՈՒՄ ՆԱՎԹԻՑ

Նավթից հանում են ըենգին, զերոսին յել
մազութ: Մազութից ստանում են զանազան րո-
ղեր, վազելին յեվ պարագֆին: Ի հարկե, այս
բոլոր գյուտերը հետզհետե յեն արված:

Գերցընք մի փորձանակ, լցընք ջրով և տա-
կից տաքացընք սպիրտալրոցի վրա: Փորձանա-
կի բերանը փակեցնք խցանով և խցանի մեջ
անցկացընք մի ապակե խողովակ և ծռեցնք մի
ուրիշ փորձանակի մեջ, վորը դրած լինի սառը
ջրի մեջ: Գոլորշին խողովակի միջով կանցնի
մյուս փորձանակի մեջ և կը դառնա ջուր: Այս
ձեռվ կարելի լե տուածի փորձանակի ամբողջ
ջուրը տեղափոխել յերկրորդ փորձանակի մեջ:
Յեթե ջուրը կեղտոտ ե, կամ մեջը ազ լուծած,
այն ժամանակ կեղան ու աղը կը մնան առաջին

փորձանակի մեջ, իսկ յերկրորդ փորձանակու մկունենաք մաքուր, զտած ջուր:

Ալժմ մեկ ավելի պինդ փորձանակի մեջ ածեք նավթ, բերանը խցանով փակեք և նրա մեջ անցկացրեք տալակե ծռած խողովակ, վորով միացրեք մյուս փորձանակի հետ. յերկրորդ փորձանակի բերանը փակեցեք յերկու անցք ունեցող խցանով. մեկ անցքի մեջ դրեք միացնող խողովակը, իսկ մյուս անցքի մեջ մի ուղիղ խողովակ աղատ կտի ընկած։ Յերբ սկսեք նավթը տաքացնել, արդ ուղիղ խողովակի միջով կսկսեն դուրս գալ ալրվող գաղերը։ Կարելի յե նրանց այրել։ Յեթե աստիճանաբար տաքությունն ուժեղացնենք, այն ժամանակ ջերմության տարբեր աստիճաններում նավթի միջից կանչառվեն զանազան նյութեր։ Այդ նյութերը գոլորշու վիճակում կը սանեն մլուս փորձանակների մեջ և յեթե վերջիններս սառը ջրի մեջ են, նրանք կը թանձրանան և կը դառնան հեղուկ։ Այս ձևով են ստացվում գաղոլին, բենզին, կերոսին և դանագան յուղեր։

Այս գործողությունը կոչվում է անջատող թորումն։ Այսպիսի թորման միջոցով նավթը մշակում են գործարաններում և բացի վերև հիշված նյութերից ուրիշ շատ տեսակ յուղեր ու նյութեր են ստանում։ Մինչև որս 200-ից ավե-

լի նյութեր են ստացվել և զեռ շարունակում
են նորանոր փորձեր կատարել և դյուտեր ա-
նել: Մազութը կամ հում նավթն իր մեջ շատ
թանգարժեք նյութեր ունի: Եթե վառելիք դոր-
ծածելով մենք շատ բան ենք կորցնում:

10. ՆԱՎԹԻ ԶԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Բացի մեր թված նյութերից, վոր գործա-
րաններում ստանում են նավթը վերամշակելով,
բնության մեջ ել գտնվում են մի շարք նյու-
թեր, վորոնք իրենց ծագումն ստացել են նավ-
թից: Դրանք են՝ զետնամումը, ասֆալտը, այր-
վող զաղեր և այլքող թերթախավեր:

Գետնամումը կամ ոգուկերիտը, նրա գիտական
անունն այսպիս է, մի գորշագույն կամ դեղին
հանք է, վոր գտնվում է լեռնալին տեսակների
ճեղքվածքների մեջ: Դա վոչ այլ ինչ է, լեթե
վոչ պնդացած նավթ: Ողի մեջ նա արագու-
թիամբ պնդանում է և կորցնում նավթի հոտը:
Այժմ արհեստական կերպով ել պատրաստում
են և մեղքամոմի հետ խառնելով նրանից լու-
սովորության մոմեր են պատրաստում:

Աօֆալտը լերեի շատուրիդ ծանոթ է: Երա-
նով փողոցներն են սալարկում, մայթեր պատ-


ըստում և ուրիշ շատ բաների համար դործածում. Բնության մեջ նաև գտնվում ե իր հանք – որինակ ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում և այլն, իսկ մեզ մոտ՝ Բագվում, նաև իր ե կոչվում:


Այրվող գաղեր և այրվող թերթախավեր ամեն տեղ կան: Ֆրանսիայում և ուրիշ տեղեր նրանցից յուղեր են պատրաստում կամ իրը վառելիք դործածում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b9

1.	Փայտի ցամաք թորումն	3
2.	Փայտածուխ	6
3.	Ածուխի գոյացումը բնության մեջ	7
4.	Տորֆ և գորշ ածուխ	8
5.	Բարածուխի գոյանալը	11
6.	Բարածխի հանքեր և նրանց նշանակությունը	13
7.	Նավթավայրեր և նավթահորեր	16
8.	Ի՞նչպես առաջացավ նավթը	20
9.	Ի՞նչ և ոտացվում նավթից	25
10.	Նավթի ձեռափոխությունները բնության մեջ	27







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039274

A 4330

1.	Տերեաթափ և աշնան գուկներ	
3.	Թռչունների չուն	10 »
4.	Պտղուղներ և սերմեր	10 »
8.	Խնչ վոր կը ցանես, այն ել կը հնձես	10 »
11.	Բամբակ	10 »
16.	Մեղու	15 »
20.	Հանքեր	15 »
21.	Շերամ	10 »

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

2.	Կենդ. հարմարացումը և ձմեռալին քունը.	
5.	Հող և նրա մշակումը.	
6.	Բանջարանոց.	
7.	Ալղի.	
9.	Մարզադետին	
10.	Ող և ջուր.	
13.	Կովի կերը և խնամքը.	
14.	Կաթնամթերքներ.	
15.	Բնտանի թռչունների խնամքը.	
17.	Գյուղատնտ. մեքենաներ և գործիք- ներ	
18.	Ալվարիում և տերրարիում	
19.	Խնչպես կազմել հերբարիում	
22.	Անտառ.	